ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Երկրար. և աշխարհագր. գիտ. XIV, № 2, 1961 Геологич. и географич. науки

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՋՐԲԱՇՅԱՆ

(Ծննդյան 65-ամյակի առթիվ)

Հայաստանի երկրաբանական ծառայության ավագ սերնդի ներկայացուցիչ, Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի հիմնադիր, պրոֆեսոր Տիգրան Արշակի Ջրբաշյանը ծնվել է 1895 թվականին Վանում։ Սկզբնական կրթությունը ստանում է հայրենի քաղաքում, իսկ այնուհետև փոխադրվում է Թիֆլիս, ուր և շարունակում է ուսումը Ներսիսյան դպրոցում։



1913 թվականից մինչև 1919 թվականը Տ. Ջրբաշյանը պաշտոնավարում է նախ Վանի, իսկ հետագայում Թիֆլիսի հայկական դպրոցներում, դասավանդելով մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա և բնագիտություն առարկաները։ Սակայն ուսուցչությունը չի բավարարում բարձրագույն ուսման կարոտ Տիգրանին և նա 1918 թվականին ընդունվում է Թիֆլիսի (Անդրկովկասյան) մասնավոր համալսարանի բնագիտական ֆակուլտետը, ուր սովորում է մինչև 1920 թվականի կեսերը, մինչև համալսարանի փակումը։ Այդ նույն ժամանակամիջոցում իր գոյությունը պահպանելու համար նա աշխատում է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտին կից հանքաբանական կաբինետում, որն ունենում է ճակատագրական նշանակություն նրա համար։ Հանքաբանական կա-

յինետի բավական հարուստ ու բազմազան հավաքածոները և ոգտակար հանածոների բազմերանգ ու գեղեցիկ նմուշները մեծ ազդեցություն են թողնում արտակարգ ընդունակ ու աշխատասեր Տիգրանի վրա և նա որոշում է իրեն նվիրել երկրաբանությանը և լեռնային գործին:

1920 թվականին Տ. Զրբաշյանը մեկնում է Ֆրանսիա և ընդունվում Փարիզի (Սորբոնի) համալսարանը, ուր սկզբում լսում է ֆիզիկա-մաթեմատիկական մի շարք առարկաների լրիվ դասընթացը, իսկ հետագայում փոխադրվում է Լեռնային ինստիտուտը, որը մեծ դրկանքների ու նյութական դժվարությունների գնով ավարտում է 1924 թվականին և ստանում է լեռնային ինժենների կոչում: Սակայն Զրբաշյանը չի բավարարվում ձեռք բերածով և աշխատում է լրացնել ու հարստացնել իր երկրաբանական տեսական ու գործնական գիտելիքները: Այդ նպատակով նա մինչև 1925 թվականի վերջերը շարունակում է հաճախել համալսարանի դասախոսություններին, լսում է ընդհանուր երկրաբանության, բյուրեղագիտության, հնէաբանության, հանքաբանության, քարագիտության դասընթացները և միաժամանակ աշխատում է Բնա-պատմական թանգարանի պրոֆեսոր Ա. Լակրուաի հանքաբանական լաբորատորիայում:

1926 թվականի սկզբներին Տիգրան Զրբաշյանը Փարիզից վերադառնում է Երևան և աշխատանքի է հրավիրվում Պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում որպես ընդհանուր երկրաբանության, բյուրեղագիտության և հանքաբանության առարկաների դասախոս: Այդ նույն թվականին նա ստեղծում է բյուրեղագիտական և հանքաբանական կաբինետ, որը զգալի դեր է կատարում ուսանողների գործնական պարապմունքների կազմակերպման գործում:

1929 թվականին Տիգրան Զրբաշյանին շնորհվում է դոցենտի կոչում և նա նշանակվում է երկրաբանության ու հանքաբանության ամբիոնի վարիչ, իսկ 1933 թվականին գիտա-մանկավարժական բեղմնավոր գործունեության համար նրան շնորհվում է պրոֆեսորի կոչում:

Սակայն Տիգրան Զրբաշյանը լայն ճանաչում է ստանում 1934 թվականին, երբ նա Երևանի Պետական համալսարանի ռեկտոր, հանգուցյալ Տիգրան Մուշեղյանի անմիջական օգնությամբ համալսարանում ստեղծում է երկրաբանական ֆակուլտետը: Ահա հենց այդ ժամանակ էլ դրսևորվում է նրա ոչ միայն գիտա-մանկավարժական աշխատանքի հիանալի կողմերը, այլև, նրա կազմակերպական աշխատանքի լավագույն ընդունակությունները:

Լինելով ֆակուլտետի առաջին դեկանը և նրա միակ ամբիոնի վարիչը, Տ. Զրբաշյանը մեծ ջանք ու եռանդ է գործադրում նորաստեղծ երկրաբանական ֆակուլտետը շնորհալի երիտասարդ կադրերով համալրելու, նյութատեխնիկական բազա ստեղծելու և ուսումնա-արտադրական պրոցեսը օրինակելիորեն կազմակերպելու համար: Այդ հարցերում Զրբաշյանին մեծ օգնություն է ցույց տալիս նրա ասիստենտ Շ. Շատվորյանը, որը ժառանգելով իր պրոֆեսորի լավագույն հատկությունները, մինչև այսօր էլ աշխատում է ֆակուլտետում և շարունակում է իր ուսուցչի հիանալի տրադիցիաները:

Համապատասխան դասախոսական կադրերի բացակայության պատճառով պրոֆ. Տ. Զրբաշյանը դասախոսում էր մի շարք առարկաներ, ընդհանուր երկրաբանություն, բյուրեղագիտություն, հանքաբանություն, հնէաբանություն, քարագիտություն և այլն: Ո՞րն էր նրա նեղ մասնագիտությունը

երկրաբանական գիտությունների շարքում, այդ շատ դժվար էր ասել, սակայն մի բան քաջ հայտնի էր բոլորին, որ նա տիրապետում էր իր կարդացած առարկաներին հավասար չափով:

Զրբաշյանը ուներ բազմակողմանի տեսական ու գործնական մեծ պատրաստականություն, նա տիրապետում էր մի քանի օտար լեզուների, քաջ ծանոթ էր համաշխարհային մասնագիտական գրականությանը, ստեղծել էր իր մանկավարժական, գիտա-հետազոտական ու դաշտային աշխատանքների ինքնատիպ դպրոցը: Նա զգալի գործ է կատարել նաև մայրենի լեզվով մասնագիտական ձեռնարկներ ստեղծելու համար, զբաղվել է թարգմանչական ու տերմինաբանական աշխատանքներով:

Մանկավարժական գործունեության հետ միասին Տիգրան Զրբաշյանը որոշակի աշխատանք է կատարել մեր ռեսպուբլիկայի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման և օգտակար հանածոների հայտնաբերման բնագավառում:

1927—1935 թվականներին նա որոնողա-հետախուզական աշխատանքներ է տանում հատկապես Երևանի, Կոտայքի ու Ախտալի (Հրազդան) շրջաններում ոչ մետաղական օգտակար հանածոների (պեմզա, բարիտ, մարմար, գիպս, աղ, նավթ, օբսիդիան, կիսաթանկարժեք քարեր և այլն) հայտնաբերման ուղղությամբ: Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփված են նրա մոտ երկու տասնյակի հասնող գիտա-տեխնիկական հաշվետվություններում, որոնք պահվում են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր երկրաբանության և ընդերքի պահպանման վարչության ֆոնդում: Դրանցից հատկապես արժանի են հիշատակման՝ Կոտայքի և Ախտալի (Հրազդան) շրջանների պեմզաների մի շարք հանքավայրերի հայտնաբերմանը ու հետախուզմանը (1927—1930 թթ.) կիսաթանկարժեք քարերին (1932 թ.), Զրբվեժի գիպսի հանքավայրին (1933 թ.), Շորբուլաղի (Շորաղբյուր—Շոռ ջրի ձոր) նավթաբերությանն ու աղաբերությանը (1933—1934 թթ.) նվիրված հաշվետվությունները, որոնք ներկայացնում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական զգալի հետաքրքրություն:

Տիգրան Զրբաշյանը նաև ակտիվ հասարակական գործիչ էր: Նա 1930 և 1933 թվականին ընտրվել է Երևանի Քաղաքային Սովետի Գործկոմի անդամ. 1930 թվականին մասնակցում է Տաշքենդում գումարված երկրաբանների Համամիութենական երրորդ համագումարի աշխատանքներին, իսկ 1937 թվականին ընտրվում է Միջազգային 17-րդ երկրաբանական կոնգրեսի պատգամավոր:

Զրբաշյանը բազմաթիվ անգամ ելույթներ է ունեցել աշխատավորների առաջ, հանդես գալով երկրաբանության հարցերին և հատկապես սեյսմոլոգիային նվիրված զեկուցումներով:

1935 թվականին Հայաստանի Կենտգործկոմը բարձր գնահատելով Տ. Զրբաշյանի գիտա-մանկավարժական ու հասարակական ծառայությունները նրան պարգևատրում է պատվոգրով:

Շատ կարճ ապրեց ու ստեղծագործեց լավագույն հայրենասեր ու ազնիվ քաղաքացի, հիանալի մանկավարժ ու փորձված երկրաբան Տիգրան Զրբաշյանը:

Եվ այսօր նրա բարի անունը մեծ հուզմունքով ու երախտագիտությամբ են հիշում նրա բոլոր ընկերներն ու բարեկամները, նրա աճեցրած ու դաստիարակած կադրերը: